ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

23 դեկտեմբերի, 2014 թվական **թիվ 108** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» համաձայնագրի իրականացման մասին

2014 թվականի դեկտեմբերի 23-ին «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան պատրաստված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» համաձայնագրի ստորագրման կապակցությամբ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը պետությունների ղեկավարների մակարդակով **որոշեց**՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ ապահովել «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» համաձայնագրի իրականացմանն ուղղված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ակտերի մշակումն ու ընդունումը՝ նախատեսելով դրանց ուժի մեջ մտնելը 2016 թվականի հունվարի 1-ից:

2016 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ ապահովել ներդաշնակեցված ընդհանուր դեղագրքային հոդվածների մշակումը, որոնցով ընդհանուր պահանջներ են

սահմանվում որակի հսկողության մեթոդների, դեղամիջոցների որակի փորձարկումների անցկացման համար անհրաժեշտ սարքավորումների, Եվրասիական տնտեսական միության շրջանակներում շրջանառության համար նախատեսված դեղամիջոցների արտադրության մեջ օգտագործվող փաթեթավորման նյութերի, ռեակտիվների, դեղաձեւերի, դեղանյութերի, ստանդարտ նմուշների, օժանդակ նյութերի նկատմամբ:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**